ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<< 16 >> մարտի 2016 թվականի N 16 ք.Գյումրի

ԲԱՐՍԵՂ ՔՈՉԱՐՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 2.2-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2335-Ն որոշմամբ հաստատված «Ծառայողական գործուղման մեկնած աշխատողների գործուղման ծախսերի հատուցման վճարման կարգի» 3-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետի 2016 թվականի մարտի 15-ի զեկուցագիրը.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետ Բարսեղ Քոչարյանին գործուղել քաղաք Երևան, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության Ուսուցման կենտրոն՝ <<Ներքին աուդիտորների շարունակական մասնագիտական վերապատրաստում>> դասընթացին մասնակցելու նպատակով:
2. Գործուղման տևողությունը 5 աշխատանքային օր՝ 2016 թվականի մարտի 28-ից մինչև ապրիլի 1-ը ներառյալ:

Գործուղման ընթացքում աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետ Բարսեղ Քոչարյանի պարտականությունների կատարումը վերապահել բաժնի գլխավոր մասնագետ Արտակ Հայրապետյանին:

Հ.ՍԻՄՈՆՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է